Գաբրիել Ջեմբերջյան

Ծնվել է Սիրիայի Արաբական Հանրապետության Հալեպ քաղաքում, ավարտել է տեղի Կրթասիրաց վարժարանը, ապա մշտական բնակություն հաստատել Դամասկոսում:

Նրա նախաձեռնությամբ 1998թ. ստեղծվել է <<Փյունիկ>> բարեգործական հիմնադրամը, որի պատվավոր նախագահն է այժմ:

Հայաստանում հիմնադրամը պաշտոնապես գրանցվել է 2008 թ. դեկտեմբերին:

Հիմնադրամը գործունեության ընթացքում իրականացրել է մեծածավալ ծրագրեր՝ ներառելով Հայաստանի և Սփյուռքի կրթության, գիտության, մամուլի, եկեղեցաշինության և բազմաթիվ ազգօգուտ ոլորտներ:

Գ. Ջեմբերջյանի անմիջական նախաձեռնությամբ 2009-2010թթ. հիմնադրամը Երևան քաղաքին նվիրել է 145 խաղահրապարակներ, որոնք տեղադրվել են քաղաքի մանկապարտեզներին կից և բակերում, ինչպես նաև օժանդակել է Երևանում տարբեր միջոցառումների և ծրագրերի իրագործմանը:

Բարեգործը մեծապես աջակցել է նաև Դամասկոսում Հայաստանի դեսպանատան հիմնադրմանը, նպաստել հայ-սիրիական կապերի հաստատմանն ու ամրապնդմանը: